

նպարհներով, որ բոլոր տարբերութեան պատճառն է»<sup>10</sup>):

Կտելու (հաճութեան նշան) հին եւ տարածուած սովորութեան մասին ուղեգիրը կը գրէ. «Հինայով եւ վառօդով խառնուող մը յոյները եւ հայերը կը գործածեն նկարելու Յիսուս Քրիստոսի, Կոյս Մարիամի եւն. կերպարանքները իրենց կուրծքերուն, թեւերուն եւն. վրայ՝ իրենց մորթը թեթեւօրէն ասղնոտելով»<sup>11</sup>):

1699 Յունուար 17-ին ուղեգիրը Իգմիր կը հասնի Անգլիայէն, եւ կը նկատէ.

«Քաղաքին մէջ Փրանկներէն զատ, որ 200-էն աւելի են, կան 12-14,000 թուրքեր, 8,000 յոյներ, 400 հայեր եւ 1,500 հրեաներ»: Հայերը ունին մէկ եկեղեցի<sup>12</sup>):

Այս թուականին յոյները կը բողոքեն կաթողիկոսներու կրօնական քարոզչութեանց դէմ: Փրանսական թարգմանը «Փալախայի» (ներբանածեծի) կ'ենթարկուի Չմիւռնիոյ մէջ, եւ նոյն ատեն Բարձրագոյն Դռնէն Խաթթը Շէրիֆ մը կուգայ «ի նպաստ յոյներու եւ հայերու ամբողջ թուրքիոյ մէջ, որոնք միասին զանգատած էին քարոզիչներու դէմ: Վերջիններուն սպառնալիք կ'ըլլայ Սուլթանին երկիրներէն արտաքսել, եթէ հանդարտ չմնան: Եւ պարոն տը Շաթէօնէօֆ, շատ խելացի անձ մը, այն ատեն զեսպան Բարձրագոյն Դրան մօտ, անոնց (քարոզիչներուն) խրատ տուաւ խելօք կենալու, եւ մէկդի թողելու թէ՛ յոյները եւ թէ՛ հայերը, գոնէ մինչեւ որ փոթորիկին սաստկութիւնը անցնի, աւելի մեծ նեղութենէ վախնալով»<sup>13</sup>): Շաթէօնէօֆ Փրանսական զեսպանն էր:

Նոյն տարին եւ նոյն ամսուն ուղեգիրը կ'անցնի Կ. Պոլիս եւ կը վկայէ, որ նաւարանին մէջ թէ՛ հայ եւ թէ՛ յոյն դա.

տապարտեալներուն համար կային մատուներ կրօնական արարողութեանց համար:

«Յայտնի է, ըստ զանազան տեղեկատուութեանց, թէ յոյն եւ հայ կիները որքա՞ն կ'աղմկեն մահուան եւ թաղման առթիւ իրենց ամուսիններուն, զաւակներուն կամ ուրիշ ազգականներուն, ընկերակցութեամբ ուրիշ ողբացողներու, որոնք կամ վարձուած են եւ կամ կամաւոր են, իրենց զբացիներուն մէջէն: Անշուշտ ասոնք (ողբացողները) իրական սեռէ կ'ըլլան, ինչու որ այրերը կը բաւականան հառաչելով կամ լուեկայն լալով, եւ կիներուն կը թողուն բարձրաձայն լալու իրաւունքը: Անոնք իրենց մեռեալները մեծ շուքով գերեզման կը տանին, հազուած լաւագոյն զգեստներ. իսկ եթէ հարուստ կին է, զարդարուած կ'ըլլայ գոհարեղէններով, եւ ընկերացած պատրիարքէն եւ եպիսկոպոսներէ, զգեստաւորեալ արարողական զգեստներով, մինչ քահանաները կ'երգեն եւ Ենիշէրիները թափօրին գլուխը կը գտնուին, ի պատիւ: Երբ անոնք գերեզման կը հասնին, կ'առնեն գոհարները եւ արտաքին հազուստները, մնացեալը մ'կրատով կը կտրտեն, որպէսզի գիշերը ոչ ոք գողնալու չիորձուի»:

«Հայերը կուլան ոչ միայն մահուան եւ թաղման ժամանակ, այլ իրենց ողբն ու կոծը կը վերսկսին տարւոյն մէջ որոշեալ օրերուն, մասնաւորաբար Զատիկուան տօներուն, երբ գերեզման կը տանին լաւագոյն հազուստները վախճանեալին, որուն յիշատակը սիրելի է իրենց: Հագուստները, որ այդ նպատակով իսկ պահուած են, կը թողուն գերեզմանին վրայ ու կը սկսին լալ իր թէ՛ մեռնողը նոր մեռած ըլլար կամ թաղուած: Սակայն, ասկէ եւ ուրիշ կսկիծանքի արտաքին ձեւերէ վերջ, ինքզինքնին տեղւոյն վրայ կը մխիթարեն լաւ կերուխումով, պատրաստուած եւ հոն բերուած իրենց ծանօթներէն ոմանց կողմէ»<sup>14</sup>):

10) Անդ:

11) Անդ՝ էջ 96, ծանօթութիւն:

12) Անդ՝ էջ 152

13) Անդ՝ էջ 159:

14) Անդ՝ էջ 186-7: